



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Դիդակտիկ նյութերի կիրառումը տարրական դպրոցում

ԱՌԱՐԿԱ

Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ

Արեգնազ Աթոյան

ՄԱՐԶ

Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

**Քուչակի Մ.Նալբանդյանի անվան
միջնակարգ դպրոց**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Ուսուցման զննական մեթոդները	4
Գլուխ 2. ՏՀՏ գործիքների օգտագործումը կրտսեր դպրոցում	6
Գլուխ 3. Դիդակտիկ պարագաների կիրառումը տարրական դասարաններում	8
Եզրակացություն.....	17
Գրականության ցանկ	18

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

<<Երբե՛ք մի սահմանափակեք զննականությունը>>: Յուրաքանչյուր դաս սկսելուց առաջ ուսուցիչը պարտավոր է հիշել Պողոսիի այս խորիմաստ խոսքերը և նախապատրաստել թեմային համապատասխան դիդակտիկ նյութեր ու պարագաններ:

Հատկապես կրտսեր տարիքի դպրոցականներին օդի ու ջրի պես անհրաժեշտ է զննականությունը: <<Տեսանելին՝ տեսողությանը, լսելին՝ լսողությանը, ճաշակելին՝ ճաշակելիքին>>: Բայց ամեն ինչ չափի սահմաններում, ինչը կարևոր մանկավարժական արժեք է (Կոմենսկի):

Առանց տարբեր տեսակի դիդակտիկ նյութերի զվարճալի խաղեր, գունեղ ու հրապուրիչ խաղալիքներ տանը թողած երեխան դասարանում կքնի ձանձրությից: Ոչ մի երեխա չի կարող յուրացնել այն, ինչը չի ցանկանում սովորել: Կրթության մեջ ամենաեականը ոչ սովորելու , ոչ էլ սովորեցնելու եղանակներն են , այլ սովորողների վերաբերմունքը: Իսկ վերաբերմունքի խթանման լավագույն միջոցը գեղեցիկ, հրապուրիչ ու հետաքրքրաշարժ դիդակտիկ նյութերի առկայությունն է դասապրոցեսում: Սակայն դիդակտիկ պարագանները անհրաժեշտ է ընտրել ու օգտագործել խելամտորեն:

Հետազոտական աշխատանքիս նպատակներն են՝ հստակորեն սահմանել ուսուցման զննական մեթոդները, վերլուծել մեթոդի տեսակները, իրականացման փուլերն ու կիրառման կանոնները, առանձնահատկությունները ուսումնական գործընթացում: Բարձրացնել ուսուցման և ուսումնառության որակը և արդյունավետությունը, բարելավել դասի անցկացման մեթոդները, պլանավորել, համակարգել սեփական աշխատանքը :

Ուսումնասիրության խնդիրն է բացահայտել դիդակտիկ նյութերի կիրառման էությունը, սկզբունքները, առավելությունները, սահմանափակումները, մեթոդի կիրառման ժամանակ դրսևորվող մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Թեմայի շրջանակում առաջադրված խնդրի համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ընդհանուր՝ տրամաբանական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ՝ վերլուծության, համեմատության մեթոդներ:

Գլուխ 1. Ուսուցման զննական մեթոդները

Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները: Ուսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Մեթոդները բաժանվում են բանավոր և գրավոր խմբի: Ուսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասի նպատակից ու բնույթից: Զննական են համարվում այն մեթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագաներից և ուսուցման տեխնիկական միջոցներից: Զննականությունը հնարավորություն է ընձեռնում օբյեկտներին, առարկաներին ծանոթանալ բնական վիճակում և սիմվոլների միջոցով: ¹Ուսուցման զննական մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ իյուստրացիա և դեմոնստրացիա:

Իյուստրացիա - այս մեթոդը խնդիր է դնում կամ պահանջում է ուսուցման գործընթացում ուսումնական նյութը հաղորդելիս կիրառել դիտազննական պարագաներ՝ քարտեզներ, պաստառներ, գծագրեր, նկարներ, դիմանկարներ և այլն: Դրանց ցույց տալն ու վերլուծությունը կոչվում է իյուստրացիա: Ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ պատմելը, զրույցը, բացատրությունը, դասախոսությունը զուգակցվում են իյուստրացիային, այսինքն՝ ցուցադրմանը:

Դեմոնստրացիա - այս մեթոդի էությունը նույնպես ցուցադրումն է: Օրինակ՝ ցուցադրվում են գործիքներ, սարքեր, տեխնիկական միջոցներ, զանազան պրեպարատներ, ֆիլմեր և այլն: Դեմոնստրացիայի դեպքում ցուցադրմանն ուղեկցում է շարժումը և ահա ի տարբերություն իյուստրացիայի, այն կոչվում է դեմոնստրացիա: Մակայն իմաստը մնում է նույնը՝ ցուցադրումը:² <<Իյուստրացիա, դեմոնստրացիա>> հասկացությունների բաժանումները պայմանական են: Առանձին զննական միջոցներ կարելի է դասել իյուստրացիայի խմբում և հակառակը:

¹ Ամիրջանյան Յ. <<Մանկավարժություն>> Երևան, 2005թ. էջ 166

² Ամիրջանյան Յ. <<Մանկավարժություն>> Երևան, 2005թ., էջ 166

Յան Ամոս Կոմենսկին պահանջում էր ամեն կերպ ուսուցմանը մասնակից դարձնել երեխայի բոլոր զգայարանները՝ այդ պահանջը նա անվանեց «<դիդակտիկայի ոսկե կանոն>>: Ջննական մեթոդներից Կոմենսկին, ամենից առաջ, կարևորում էր ցուցադրման մեթոդը: Այս հանգամանքը պայմանավորված է իմացության հարցում նրա սենսուալիզմով: Ցուցադրման մեթոդը զննականության դիդակտիկական սկզբունքի կենսագործման հիմնական ուղին է:

Կոմենսկին գտնում էր, որ կարելի է ցուցադրել կոնկրետ առարկան, առարկայի նկարը, գծապատկերը: Բոլոր դեպքերում էլ ցուցադրումը պետք է լրիվ ու սպառիչ լինի: Սկզբում, նրա կարծիքով՝ պետք է ցուցադրել առարկան ամբողջությամբ՝ ուսումնասիրվող առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացում տալու համար, հետո, երբ ամբողջի տպավորությունն արմատավորված է, կարելի է անցնել հիմնական մասերին, այնուհետև երկրորդականներին, և, վերջապես, մանրամասներին, մինչև որ առարկան ուսումնասիրվի իր բոլոր կողմերով, իր հիմնական ու երկրորդական հատկանիշներով:

Չափազանց կարևոր է, որ խոսքային և զննական մեթոդները հանդես գան միասնաբար: Առարկան ու նրա անվանումը երեխան պետք է միասնաբար յուրացնի:

Գլուխ 2. ՏՀՏ գործիքների օգտագործումը կրտսեր դպրոցում

Շատ կարևոր է առանձնացնել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործում: Կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացում ՏՀՏ-գործիքների օգտագործման նպատակահարմարության մասին է խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկությունը, ինչպիսին է՝ ակնառու պատկերավոր մտածողության զարգացումը: Հարկավոր է երեխային սովորեցնել աշխատել տեղեկատվության հետ: Ակադեմիկոս Ա.Պ. Սեմյոնովի խոսքը, թե՛ ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում՝ պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում:

Տարական դասարաններում ՏՀՏ-ների օգտագործման նպատակներն են՝

- . բարձրացնել սովորելու մոտիվացիան,
- . մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- . նպաստել սովորողի ճանաչողական կարողությունների խթանմանը,
- . բարելավել դասի անցկացման մեթոդները,
- . ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները,
- . պլանավորել , համակարգել սեփական աշխատանքը,
- . օգտագործել այն որպես ինքնքրթության միջոց,
- . արագ և որակյալ պատրաստվել դասին:³

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները՝ ՏՀՏ-ների հետ աշխատանքը պետք է հստակ և չափավորված լինի:

Ուսուցիչը դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի ՏՀՏ-ների օգտագործման նպատակի և ձևի մասին: ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցող դասերն իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանահուզական ներաշխարհի վրա: Կրտսեր դպրոցում գոյություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքների անցկացման տարբեր ձևեր: Համակարգիչը դասի բոլոր փուլերում և բոլոր առարկաների ժամանակ առկա է , իհարկե, հաշվի առնելով յուրաքանչյուր

³ Նախաշավիղ << Գիտամեթոդական հանդես >> 2. 2016 էջ 19

տարիքի սանիտարահիգիենիկչափանիշները: Աշակերտն ի վերջո սկսում է հասկանալ, որ համակարգիչը ոչ միայն խաղի միջոց է, այլև նոր տեղեկատվության հզոր աղբյուր ուսուցչի կողմից տարվող հսկայական, շարունակական աշխատանքի շնորհիվ այն կիրառվում է այդ նպատակով: 3-րդ դասարանում 'Արեգականյին համակարգը' թեման ուսումնասիրելիս համակարգչի օգնությամբ պատրաստել եմ շնորհանդես: Հանելուկների օգնությամբ աշակերտները կռահում են մոլորակի անվանումը, գույնը նաև՝ հեռավորությունը երկիր մոլորակից: Նմանատիպ աշխատանքի իմաստը այն է, որ աշակերտների համար բացահայտվում են տիեզերքի գաղտնիքները, շոշափելի են դառնում վերացական հասկացությունները, սեր է արթնանում ճշգրիտ գիտությունների նկատմամբ: Այն նաև խթան է հետագա խմբային, հետազոտական աշխատանքների համար: Նման աշխատանքները դասը դարձնում են ավելի հետաքրքիր, պատկերավոր: Առկա է նաև միջառարկայական կապը՝ Ես և շրջակա աշխարհը-Մայրենի-Մաթեմատիկա-Կերպարվեստ-Տեխնոլոգիա: Դիդակտիկ նյութերը, պաստառները, քարտերը, խաղերը և համակարգիչը նպաստում են ցանկացած բարդության տեղեկատվության ընկալմանը և բարձրացնում են ուսման որակը: Միաժամանակ դիդակտիկ նյութերը օգնում են՝

- .սովորողի մեջ հետաքրքրություն առաջացնել տվյալ առարկայի նկատմամբ,
- .զարգացնել լրացուցիչ գրականությամբ աշխատելու հմտություններ,
- . համակարգել ստացած գիտելիքները, վերլուծել, ամփոփել,
- .բարձրացնել գիտելիքների որակը:

Տարական դասարաններում օգտագործելով բազմաթիվ դիդակտիկ պարագաներ, եկել եմ այն եզրակացության, որ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ է, երբ աշակերտների մեջ զարգանում են ինքնուրույն սովորելու, ուսումնասիրելու, պրպտելու-գտնելու կարողություններ և հմտություններ: Նման գործելակերպը նպաստում է աշակերտների խորը և կայուն գիտելիքների ձեռքբերմանը, աշակերտները հասկանում և օգտագործում են յուրացված գիտելիքները: Ուսուցիչը պետք է ձևավորի ստեղծագործող, տեղեկացված այնպիսի անհատականություն, որն իր գիտակցական կյանքում կարող է սովորել, զարգանալ, ինչու չէ, նաև սովորեցնել: Տարական դասարաններում կազմակերպված ճիշտ և խելամիտ ուսուցումը սովորողի ապագա հաջողությունների բանալին է:

Գլուխ 3. Դիդակտիկ պարագաների կիրառումը տարրական դասարաններում

Միջոցների բազմազանության մեջ իր անփոխարինելի տեղն ու դերն ունեն ուսուցման գննական պարագաները: Ինչ խոսք, այժմ շատացել են դիդակտիկ նյութերը, սակայն այսպես թե այնպես, կարիք է զգացվում սեփական մեթոդական զինանոցը հարստացնել ինքնաշեն դիդակտիկ նյութերով: Որպես դասվար իմ առաջակարգ խնդիրն է եղել երեխաների մեջ զարգացնել գեղեցիկը տեսնելու կարողություն բնության մեջ, արվեստում, մարդկային հարաբերություններում, ընդհանրապես շրջապատում, այնտեղ, որտեղ ապրում և սովորում են իմ աշակերտները և դրա հիման վրա երեխաների մեջ դաստիարակել ազնվություն, բարություն և հոգու գեղեցկություն: Երեխաների գեղագիտական ճաշակը մենք զարգացնում ենք բոլոր առարկաների դասավարդման ժամանակ բազմաթիվ միջոցներով և հնարքներով: Ուսուցչի խոսքը, իմ կարծիքով դաստիարակչական զենք է: Նա գործ ունի դեռ չկազմակերպված էակի հետ, նա ձևավորում է աճող սերնդի հոգեկան աշխարհը: Մակայն, որքան էլ խոսքը հարուստ և տպավորիչ լինի, աշխատանքը շահում է, եթե այն ուղեկցվում է գննական նյութերով: Հանրահայտ ճշմարտություն է, որ կրտսեր դպրոցականների մտածողությունը կոնկրետ է, հետևաբար գննականությունը կօգնի նրանց յուրացնելու մատուցվող նյութը: Ուսուցանվող նյութը ավելի մատչելի, դյուրըմբռնելի և հաճելի դարձնելու համար ուսուցիչը դասարան է մտնում դիդակտիկ նյութերով զինված:

Ժամանակակից դասը արդյունավետ դարձնելու համար ուսուցիչը պետք է ծանոթ լինի մանկավարժական գիտության նորագույն նվաճումներին և առաջավոր ուսուցիչների ուսանելի փորձին, ստեղծի իր աշխատանքային սեփական «դարբնոցը»: Այսօր տարրական դասարանների ուսուցիչները վերանայում են իրենց փորձը, որոնում ուսուցման նորանոր ձևեր և մեթոդներ, վերակառուցում դասի պրոցեսը: Այսօրվա ուսուցիչը իր ձեռքի տակ ունի բազմազան միջոցներ, որոնցով կարելի է ուսուցումը դարձնել հետաքրքիր ու բովանդակալից:

Ժամանակակից ուսումնական տեխնոլոգիաների ներթափանցումը կրթական համակարգ իրականացվում է ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով: Ուսուցման արդյունավետություն ասելով սովորաբար հասկանում ենք նոր մանկավարժական տեխնոլոգիաների , մեթոդների, ինչպես նաև համակարգիչների , պրոյեկտորների և էլեկտրոնային զրատախտակների կիրառում դպրոցներում:⁴ Հայտնի է, որ կրտսեր դպրոցը կրթության

⁴ Նախաշաղկիդ << Գիտամեթոդական հանդես >> 2. 2016, էջ 15

հիմնաքարն է , ինչը պայմանավորում է սովորողների հետագա ամբողջ ուսումնառության որակը: Սա տարրական դասարանների ուսուցչի համար մեծ պատասխանատվություն է : Նրա խնդիրն է՝ ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլև ձևավորել երեխայի հոգևոր աշխարհը, բացահայտել նրա դրական անձնային հատկանիշները, պատրաստել նրան կյանքի համար: Այժմյան գիտությունն ու տեխնիկան չեն դոփում տեղում: Ժամանակակից աշխարհն առաջարկում է նորարական տեխնոլոգիաներ, որոնք համապատասխանում են հանրության հետաքրքրություններին: Մեր ժամանակի օժտված երեխաները <<թույլ չեն տալիս>>, որ ուսուցիչը դաս վարի ավանդական մեթոդներով, այլ <<ստիպում են>> գտնել ուսուցման նոր տեխնոլոգիաներ և հնարներ:

Շատ երկրներում տարբեր մեթոդիստներ և ուսուցիչներ աշխատում են ստեղծել նոր դիդակտիկ պարագաներ, պաստառներ, խաղեր, քարտեր, որոնք իրենց ձևով, չափով, գույնով համապատասխանում են կրտսեր դպրոցականի հետաքրքրություններին և նպաստում արդյունավետ ուսուցմանը: Տարրական դասարանների աշակերտներն առանձնանաում են ավելի շատ նոր ու հետաքրքիր բաներ իմանալու , սովորելու ձգտումով: Ակնհայտ է, որ հիմնական կայուն գիտելիքներ նրանք ստանում են ոչ թե մեխանիկական մատուցման, այլ ինքնուրույն պրպտելու, գտնելու և ուսումնասիրելու ճանապարհով: Բոլոր երեխաները բնատուր հետաքրքրասեր են, դրա համար ուսուցիչն իր առջև պետք է նպատակ դնի՝ աշակերտին դարձնել գիտելիքներ ստանալու գործընթացի ակտիվ մասնակից, ուսումնասիրող և ստեղծագործող անհատականություն: Ձևական պարագաները պետք է համապատասխանեն ուսուցանվող թեմային, պետք է լինեն կոկիկ, գեղեցիկ, գունեղ, որպեսզի երեխան ակամայից ուշադրություն դարձնի դրանց, սակայն չշեղվի դասից: Դրանք պետք է համապատասխանեն նաև աշակերտի տարիքին և իմացական ոլորտներին: Երբ տարեսկզբին ուսուցիչը փակցնում է մի շատ գեղեցիկ, գունավոր օրացույց, որտեղ գրված են շաբաթվա օրերը: Ճիշտ է, այն իր բնույթով ուսուցողական է, ստեղծում է միջառարկայական կապ, սակայն որքանով է դա նպատակահարմար, երբ առաջին դասարանցին կարդալ չգիտի և չի ճանաչում թվանշանները: Ձևական պարագաները պետք է հարմար լինեն նաև իրենց չափերով: Եթե պատին փակցված պաստառը ներառում է չհամակարգված ուսումնական նյութ, որի շրջանակում աշակերտը չի կարողանում ճիշտ կողմնորոշվելու այն ընկալել, ապա որն է դրա ստեղծման նպատակը: Կամ՝ խմբային աշխատանք կատարելու համար

խմբերին բաժանվում են քարտեր, որոնց վրա բառերը գրված են շատ մանր տառերով, նկարները ցայտուն չեն: Աշակերտները դրանք ևս դժվարությամբ են ընկալում: Ուրեմն, ճիշտ է ասված՝ «Ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ»: Երբ պատին ամրացվում է ինչ, որ պաստառ, տառեր, թվանշանները պետք է գրված լինեն գեղեցիկ, տեսանելի և արտահայտիչ: Կարևոր է նաև թղթի գույնի ընտրությունը: Օրինակ՝ սպիտակ թղթին բաց դեղինով, բաց կանաչով գրվածը երեխան չի նկատում և չի ընկալում: Պաստառների կամ քարտերի վրա գրված պարզ նախադասությունները պետք է ներառեն աշակերտներին ծանոթ բառեր: Նշենք նաև, որ գունեղ, ճաշակով ձևավորված գննական պարագաները հիմնականում օգտագործվում են առաջին և երկրորդ դասարաններում: Գծապատկերները, աղյուսակները, տարածական մարմինները օգտագործվում են երրորդ-չորրորդ դասարաններում: Չորրորդ դասարանում աշակերտների մեջ պետք է աստիճանաբար զարգացնել վերացական մտածողություն: Նոր տեխնոլոգիաները ներառում են այնպիսի դիդակտիկ գործիքներ, ինչպիսիք են, օրինակ, բանականությունը, հիշողությունը զարգացնող քարտերը: Շատ հաճախ կարելի է օգտագործել քարտերի վրա պատկերված առարկաներ, որոնցից էլնեում են ճյուղեր, ցանկալի է, դրանք լինեն գունավոր: Ամեն ճյուղից պետի էլնի երկու-երեք հանգույց՝ բառեր, կամ ուղակի թեմային համապատասխանող նկարներ: Դիդակտիկ քարտերը թույլ են տալիս թեմայի շուրջ հաղորդել ավելի շատ տեղեկատվություն: Քարտերի միջոցով ստացված գիտելիքները ամրակայվում են ճկունորեն և խորությամբ: Քարտեր կարելի է օգտագործել տարբեր դասերի ընթացքում՝ ստեղծելով միջառարկայական կապեր: Առաջին դասարանում մաթեմատիկայի դասերին օգտագործում են քարտեր՝ հիմնականում պարզ խնդիրներ կազմելու նպատակով: Դասարանը բաժանվում է խմբերի, ապա յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտենում է ուսուցչի սեղանին և ընտրում է ցանկացած ծրար: Ծրարները փակ վիճակում են մնում այնքան ժամանակ, մինչև բոլոր խմբերը լսում են համապատասխան հանձնարարությունը: Ապա ծրարները բացվում են, տրվում է ժամանակ՝ աշխատանքի կատարման համար: Այս աշխատանքի շնորհիվ զարգանում է սովորողների՝ լսելու, միասին աշխատելու և եզրահանգումներ կատարելու կարողությունները:

Ուսուցման ընթացքում՝ օգտագործելով տարբեր մեթոդներ, մենք ձգտում են դրանց ընտրության մեջ դրսևորել առավելագույն ստեղծագործական մոտեցում՝ առանձնապես ուշադրություն դարձնելով աշակերտների ինքնուրույնությանը և ստեղծագործական

ակտիվությանը:

Ուսումնասիրելով մաթեմատիկան՝ տարրական դասարանների աշակերտները յուրացնում են մի շարք բարդ հասկացություններ՝ հավասարությունը, անհավասարություն, թվային կարգեր, դասեր, բազմանիշ թվեր, հայտանիշ և այլն: Կրտսեր դպրոցականների համար շատ դժվաշ է պատկերացնել այդ բոլորը առանց համապատասխան դիտակտիկ նյութերի: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ես կիրառում եմ բազմաթիվ դիդակտիկ նյութեր, որոնք նպաստում են թեմաների յուրացմանը: Խոսեմ առաջինի մասին: Դա նկար-պաստառ է՝ առաջինից չորրորդ դասարանների մաթեմատիկայի դասերին օգտագործելու համար: Այն հնարավոր է օգտագործել մաթեմատիկայի ծրագրային համարյա բոլոր նյութերի ուսուցման ընթացքում: Պաստառը կազմված է երեք ուղղաձիգ, ինքնուրույն մասերից: Պաստառի ձախ, աջ և ներքևի մասում պատրաստված են գրպանիկներ, որտեղ տեղավորված են շարժական, բազմազան գունավար նկարներ, թվեր, մաթեմատիկական տարբեր գործողություններ նշաններ, երկրաչափական պատկերներ: Գրպանիկներում դրված են նաև առանձին բառեր՝ կար, վերցրին, նվիրեցին, անջատեցին, կերան, բերեցին, զինը, քանակը, զանգվածը, ծավալը, գումարելի, գումար, արտադրիչ, արտադրյալ, նվազելի, հանելի, տարբերություն, բաժանելի, բաժանարար, քանորդ և այլն: Այս բառերը հնարավորություն են տալիս պաստառի վրա կատարել տարբեր տիպի խնդիրների կազմում, համառոտագրում: Պաստառի մեջտեղի մասի երեք տողի վրա կարելի է տեղադրել բառերը, թվերը, տառերը և նկարները: Պաստառի վրա կարելի է կատարել բազմապիսի աշխատանքներ՝ սկսած թվերի ուսուցումից մինչև բաղադրյալ խնդիրների լուծումը: Պաստառի վրա փակցում եմ նկարներ և պահանջում եմ աշակերտներից կազմել խնդիր և լուծել գրավոր կամ բանավոր: Այս առաջադրանքի նպատակն է՝ ստուգել, թե ինչպես են երեխաները օգտվում պաստառից, ինչպիսին է գիտելիքների մակարդակը, ակտիվացնել ուշադրությունը, խնայել ժամանակը և բարձրացնել ուսուցման արդյունավետությունը: Շատ առաջին դասարանցիներ, գալով դպրոց, արդեն գիտեն հաշվել տասի սահմանում գումարել և հանել: Բայց կան երեխաներ, որ առանց դիդակտիկ նյութերի չեն կարողանում կատարել անգամ ամենապարզ մաթեմատիկական գործողություններ: Նրանք չեն կարողանում համեմատել թվերը, իսկ, եթե, ցուցադրվում են նկարներ, երկրաչափական պատկերներ, ապա ամենաթույլ երեխան անգամ կարողանում է հաղթահարել դժվարությունները: Առաջին տասնյակի սահմանում գիտակցորեն

հաշվելը հետագա հաշվման և մաթեմատիկական չորս գործողություններ կատարելու հիմքն է: Հարկավոր է միշտ հիշել, որ նոր անձանոթ տեքստի վարժությունը ավելի շատ հետաքրքրություն է առաջացնում երեխաների մեջ, քան սովորական աշխատանքը: Պաստառը օգնում է բազմաբնույթ աշխատանքներ կազմակերպելուն: Միննույն ժամանակ պաստառի օգնությամբ աշխատելիս անհրաժեշտ է անպայման խոսել, բացատրել: «Թվագրություն» թեման սովորելիս երեխաները, կատարելով պրակտիկ գործողություններ, միացնում են երկու առարկաների բազմազանություններ, հեռացնում են բազմության մասերը, գտնում են բազմությունների քանակը: Առարկաների նկարների վրա տարվող այսպիսի աշխատանքները հիմք են ծառայում թվագրությունը, թվաբանական գործողությունները, թվերի համեմատությունները լավ յուրացնելուն: Այստեղ երեխաները օգտագործում են թվային քարտեր և երկրաչափական պատկերների հավաքածուներ: Մաթեմատիկայի ծրագրի հիմնական խնդիրներից է նաև գումարման աղյուսակի յուրացումը: Անվիճելի է դրա կարևորությունը ծրագրային հետագա նյութի յուրացման գործում: Սովորաբար առաջին դասարանցիները հաճույքով և հեշտությամբ են յուրացնում այդ թեման: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ դիդակտիկ նյութերի կարիք է զգացվում:

Ամենաբարդ մեթոդական հարցերից է 1ից 4-րդ դասարաններում թվաբանական խնդիրների լուծումը (պարզից բարդ), որին բավականին մեծ տեղ է տրված: Այս աշխատանքը ամուր հիմքի վրա դնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել հասկանալ խնդրի պահանջը և ըստ հաջորդականության որոշել, թե ինչ է անհրաժեշտ այդ պահանջը կատարելու համար: Այստեղ էլ աշխատանքն արդյունավետ են դարձնում դիդակտիկ նյութերը: Եվ ահա օգտագործում են մի այսպիսի պաստառ, որի ուղղաձիգ երեք բաժինները հնարավորություն են տալիս ակնառու կերպով համառոտագրել խնդրի պայմանը՝ նկարներ ցուցադրելով, աղյուսակ կազմելով և այլն: Յուրաքանչյուր ցուցադրամիջոց ունի իր նշանակությունը: Ուսուցիչն ինքը պետք է ընտրի այդ ձևերից առավել արդյունավետը՝ նկատի ունենալով այն, թե որն ավելի շուտ կյուրացնի աշակերտը: Երեխաները առանձնապես հաճույք են ստանում այն խնդիրներից, որտեղ կարիք է զգացվում կազմել հավասարումներ: Տարբեր նկարներով երեխաներին առաջադրվում է կազմել խնդիրներ և լուծել: Նրանք պաստառի վրա կարողանում են արագ կազմել տրված խնդրի հակադարձ խնդիրները: Եթե երեխաները թվերով դժվարանում են կազմել հավասարումներ, այդ

դեպքում օգնության է գալիս պաստառը, որի վրա նկարների օգնությամբ երեխաները ավելի շուտ են կարողանում հասկանալ, կազմել և լուծել հավասարումները: Պաստառի վրա հաճախակի են կազմում խնդրի պայմանը և երեխաներին առաջարկում լուծել: Աշակերտները տրված խնդիրները լուծում են յուրովի, տարբեր եղանակներով՝ առանձին գործողություններով, արտահայտություն կամ հավասարում կազմելով: Երբ նպատակ են դնում ստուգելու, թե ով որ տարբերակով կամ եղանակով է լուծել, ապա իմ հրահանգով նրանք բարձրացնում են իրենց մոտ եղած ազդանշանային քարտերը: Կարճ ժամանակում կարողանում են պարզել, թե աշակերտներն ինչպես են լուծել առաջադրված խնդիրը: Նրանք կարողանում են բանավոր բացատրել խնդրի բովանդակությունը, ասել, թե ինչն է անհայտ և ինչպես իմացան գինը, քանակը, արժեքը և այլն: Հայտնի է, որ սովորողները լավ են յուրացնում այն նյութը, որը նախապատրաստվում և դժվարությունը հաղթահարվում է անմիջականորեն, իրենց ուժերով: Այս իմաստով շատ օգտակար է դիդակտիկ նյութերի պատրաստումը երեխաների ուժերով: Նրանք ավելի են հետաքրքրվում ուսուցվող նյութով: Դասերի ընթացքում երեխաների ուշադրությունը զարգացնելու համար պաստառի վրա դնում են երկրաչափական տարբեր գույնի և չափսի պատկերներ: Հանձնարարում են ուշադիր նայել, ապա ծածկում են վարագույրով և առաջարկում նկարել նույն պատկերները նույն հերթականությամբ, մեծությամբ և գույնով: Հետագայում այսպիսի աշխատանքը ավելի են բարդացնում, ավելացնում պատկերների թիվը, փոփոխում նրանց չափերը: Նմանօրինակ աշխատանքները, տարբեր տիպի խնդիրների լուծումը նպաստում են ոչ միայն մաթեմատիկական մտածողության և ինքնուրույն աշխատանքի ձևավորմանը, այլև ծառայում են մաթեմատիկայի հիմնական դասընթացն ամրապնդելուն: Պաստառի վրա կատարվող աշխատանքներն ակնհայտորեն օգնում են երեխաներին, նրանց ճաշակը զարգացնելուն, ժամանակը ռացիոնալ օգտագործելուն, սեր առաջացնում առարկայի նկատմամբ, գրավում ուշադրությունը, զարգացնում ինքնուրույնությունը և ստեղծագործական ակտիվությունը ուսուցման պրոցեսում: Այժմ կանգ առնեմ մի քանի դիդակտիկ նյութերի նկարագրության վրա, որոնք ևս օգտագործում են մայրենիի դասերին: Մայրենիի ուսուցման խնդիրներից է զարգացնել աշակերտների բանավոր և գրավոր խոսքը, մտածողությունը, բարձրացնել նրանց մակարդակը, նրանց մեջ դաստիարակել աշխատասիրություն և այլն: Տարրական դասարաններում իմ տարիների աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ առաջին հերթին անհրաժեշտ է երեխաների

մեջ սեր առաջացնել մայրենի լեզվի և գրականության նկատմամբ: Իսկ այդ պետք է իրականացվի ոչ թե ժամանակ առ ժամանակ, այլ որոշակիորեն մշակված համակարգով, գիտականորեն, մանկավարժորեն և հոգեբանորեն հիմնավորված մեթոդական հնարքներով: Աշակերտների խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի, նրա առանձին բաժինների (գրաճանաչության, ընթերցանության, ուղղագրության, քերականության) հիմնական նպատակն է: Խոսքի զարգացումը սկսվում է հենց գրաճանաչության շրջանից: Գաղտնիք չէ, որ երեխաներին միշտ գրավում է գեղեցիկը: Գրաճանաչության շրջանն ավելի բովանդակալից և հետաքրքիր դարձնելու համար կազմեցի յուրաքանչյուր տառի համար առանձին պաստառ: Պաստառի վերնից ձախ անկյունում գրված են տպատառ և ձեռագիր (մեծատառ և փոքրատառ) տառերի նմուշները: Ամբողջ սովորաթղթի վրա փակցված են նկարներ, որոնց անվան սկզբում, բառամիջում կամ վերջում կան այդ տառերը: Ո՞րն է նպատակը. Նախ անցնելով տառը՝ երեխան ծանոթանում է նրա տպագիր և ձեռագիր գրությանը, կարողանում է ասել ցուցադրված նկարների անունները, ապա լրացնել չիմացածը: Աշակերտը կարողանում է այդ բառերով կազմել կապակցություններ, դրանք օգտագործել նախադասության մեջ, գտնում է այդ բառերի հոմանիշը, հականիշը, մի քանի նկար իրար կապելով՝ կազմում է փոքրիկ պատմություններ: Այդ պաստառները շատ են օգնում երեխաների բառապաշարը հարստացնելուն: Նրանք սովորում են բազմաթիվ նոր բառեր դպրոցական կյանքի, ընտանիքի, գիտության և այլ բնագավառների վերաբերյալ:

Այսպիսի աշխատանքը մեծ բավականություն և հաուճույք է պատճառում երեխաներին: Նրանք լրացնում են, օգնում իրար, պատմում տեսածը յուրովի, և զգացվում է, թե ինչպես օր-օրի հարստանում ու կատարելագործվում է նրանց խոսքը: Բացի բանավոր խոսքի զարգացումից, զարգանում է նաև աշակերտների գեղագիտական ճաշակը: Նրանք տեսնում են գեղեցիկ, գունազարդ նկարներ, ասում առարկայի գույնը, թվում, թե էլ ինչ գույնի կամ մեծության կարող է լինել այդ առարկան: Յուրաքանչյուր թեմայի համար ստեղծել են փոքր նկար-պաստառներ, որոնք օգտագործում են աշակերտների ինչպես ինքնուրույն, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Նախապատրաստական շրջանում այդ թեմատիկ և առարկայական նկարների ու գծային մոդելների օգնությամբ երեխաներին գաղափար են տալիս միավանկ ու բազմավանկ բառերի, վանկը բաղադրող հնչյունների, նախադասության, նախադասության կազմի մեջ մտնող բառերի,

տողադարձի ժամանակ գաղտնավանկ ը-ի և բառամիջում և ունեցող բառերի մասին: Երեխաներին բաժանում եմ մարդկանց կամ կենդանիների կատարած գործողություններ պատկերող նկարներ: Ստանալով նկարները՝ աշակերտներս կազմում են նախադասություններ, գրում և ընդգծում են նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Խմբային աշխատանքի ժամանակ խմբերին բաժանում են առարկայական նկարներ և պահանջում, որ նրանք տան առարկայի ճիշտ անվանումը, գտնեն հոմնիշը, ասեն, թե քանի վանկանի բառ է, քանի հնչյուն և տառ ունի այն: Կամ երեխաներին բաժանում են քարտեր, որոնց վրա գրված են բառեր: Երեխան բարձրաձայն կարդում է բառը, ասում է, թե տվյալ բառը ինչ է ցույց տալիս՝ առարկա, հատկանիշ, թե գործողություն: Ապա այդ բառով կազմում են բառակապակցություններ և նախադասություններ կամ կապակցված տեքստ: Այսպիսի աշխատանքի նպատակն է երեխաներին սովորեցնել նախադասություն կազմել, զարգացնել խոսքը, հարստացնել բառապաշարը, դաստիարակել սեր և հպարտություն դեպի հայրենիքն ու ժողովուրդը: Տարրական դասարներում մայրենիի դասերի ամենահիմնական նպատակներից մեկը կարդալու տեխնիկայի կատարելագործումն է: Լավ կարդալ նշանակում է կարդալ հասկանալով, պարզ, հստակ, բնական խոսքի արագությամբ, ճիշտ արտահայտել գործող անձերի հոգեվիճակները, զգացմունքները, մտքերը: Հասկանալով այս բոլորի նշանակությունը՝ ուսուցիչը կարդալու տեխնիկայի վրա պետք է հստակ ուշադրություն դարձնի: Անհրաժեշտ է այս աշխատանքը սկսել հենց 1-ին դասարանից: Այդ նպատակով ըստ դասարանների ստեղծել եմ հատուկ քարտեր, որոնք օգտագործում եմ բանավոր կամ գրավոր աշխատանքից խնայված բոլորների հաշվին: Երեխաներին բաժանում եմ քարտերը, որտեղ գրված են փոքրիկ, մատչելի տեքստեր: Աշակերտն անձանոթ տեքստը կարդում է առանց դրան նախապատրաստվելու: Այսպիսի աշխատանքի նպատակն է ստուգել երեխաների կարդալու տեխնիկան, պարզել, թե աշակերտը մեկ բոլորում քանի բառ է կարդում: Ապա առաջադրանքը ավելի եմ բարդացնում, առաջարկում եմ պատմել կարդացածի բովանդակությունը, բացատրել անձանոթ բառերը և ասել, թե ինչ բառերով կարելի է այն փոխարինել, ինչ տրամադրությամբ պետք է կարդալ և այլն: Այսպիսի աշխատանքները ուսումնական տարվա տարբեր ժամկետներում միանգամայն տարբեր դրսևորումներ են ունենում: Դիդակտիկ նյութերի ու պարագաների պատրաստման և օգտագործման խնդիրը <<Մայրենի>>

առարկայի դասաժամերին լուծում ենք մի մեթոդով , որը կոչվում է <<Բնության մասնիկ>>⁵: Այս մեթոդի քայլարշավը հետևյալն է . Երեխաներին տրվում է հանձնարարություն. Ուշադիր զննել յուրաքանչյուր կենդանու, թռչունի, սողունի արտաքին տվյալները: Այնուհետև երեխաները ամենուր իրենց հայացքով զննում են հանդիպած քարն ու փայտը և փորձում նմանեցնել որևէ կենդանու կամ թռչունի: Դրանցից լավագույնները հավաքում ու բերում ենք դպրոց: Տեխնոլոգիա առարկայի դասաժամին քննարկում ենք բոլորի գտածոները: Լավագույն նմանություն ունեցող քարը կամ փայտը իրենց ակտիվ մասնակցությամբ վերամշակում ենք և բերում վերջնական տեսքի: Երբ կուտակվում են կենդանիներն ու թռչունները, դասարանում ստեղծում ենք <<Բնության անկյուն>> և այն կոչում <<Խոսքովի արգելոց>>: Մայրենիի դասաժամերին հեքիաթների ու պատմվածքների հերոսները մեր միասնական ուժերով պատրաստված կենդանիներն են: Օր առաջ երեխաներից թաքուն պատվանդանի վրա ստեղծում ենք դասանյութին համապատասխան տեսարան. <<Արջն ու գիրքն>>, <<Մայր սագի հեքիաթը>>: Դա էլ դառնում է հրաշալի դիդակտիկ նյութ: Երկրորդ դասարանում այցելում ենք <<Բնության թանգարան>> ծանոթանալու Հայաստանի <<Կարմիր գրքին>>: Այնուհետև ստեղծում ենք մեր <<Խոսքովի արգելոցի>>, <<Կարմիր գիրքը>> և գրանցում մեր կենդանիներին: Երրորդ դասարանում հավաքում ենք տվյալների մեր ունեցած կենդանիների մասին ու քննարկում <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասաժամերին:⁶ Իմ կարծիքով՝ այս ողջ աշխատատար, երկարատև, բայց հաճելի մեթոդն ապահովում է գեղագիտական ճաշակ, ճանաչելիություն, զննողականություն, միջառարկայական կապեր՝ ինտեգրում:

Ի վերջո բոլոր մեթոդների ու սկզբունքների հիմնական նպատակը երեխային բազմակողմանիորեն կրթելն ու դաստիարակելն է: Ուստի յուրաքանչյուր ուսուցչի սրբազան պարտքն է՝ լինել չափազանց ուշադիր ու հետևողական, որպեսզի երեխայի զարգացումն ընթանա ճիշտ, համաչափ ու ներդաշնակ:

⁵ Նախաշավիղ << Գիտամեթոդական հանդես>> 2. 2012, էջ 18

⁶ Նախաշավիղ << Գիտամեթոդական հանդես>> 2. 2012 էջ 18

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատաքի արդյունքում հանգել եմ այն եզրակացության, որ ճիշտ կազմված և մեթոդապես հիմնավորված դիդակտիկ նյութերը ժամանակին և նպատակային օգտագործելու դեպքում ուսուցանվող նյութը դառնում է դյուրամարս, դասն անցնում է հետաքրքիր, մեծանում է սովորողների ճանաչողական ակտիվությունը, ուսուցումը դառնում է արդյունավետ:

Տարական դասարաններում օգտագործելով բազմաթիվ դիդակտիկ պարագաներ, եկել եմ այն եզրակացության, որ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ է, երբ աշակերտների մեջ զարգանում են ինքնուրույն սովորելու, ուսումնասիրելու, պրպտելու-գտնելու կարողություններ և հմտություններ: Նման գործելակերպը նպաստում է աշակերտների խորը և կայուն գիտելիքների ձեռքբերմանը, աշակերտները հասկանում և օգտագործում են յուրացված գիտելիքները: Դիդակտիկ նյութերը, պաստառները, քարտերը, խաղերը և համակարգիչը նպաստում են ցանկացած տեղեկատվության ընկալմանը և բարձրացնում են ուսման որակը: Միաժամանակ դրանք օգնում են`

- սովորողի մեջ հետաքրքրություն առաջացնել տվյալ առարկայի նկատմամբ,
- զարգացնել լրացուցիչ գրականությամբ աշխատելու հմտություններ,
- համակարգել ստացված գիտելիքները, վերլուծել, ամփոփել,
- բարձրացնել գիտելիքների որակը:

Ուսուցիչը պետք է ձևավորի ստեղծագործող, տեղեկացված այնպիսի անհատականություն, որն իր գիտակցական կյանքում կարող է սովորել, զարգանալ, ինչու չէ, նաև սովորեցնել: Տարական դասարաններում կազմակերպված ճիշտ և խելամիտ ուսուցումը սովորողի ապագա հաջողությունների բանալին է:

Այստեղ տեղին է հիշել չինական ասացվածքը. <<Պատմիր, և ես կմոռանամ, ցույց տուր, և ես կհիշեմ, հնարավորություն տուր փորձելու, և ես կհասկանամ>>:

Ի վերջո բոլոր մեթոդների ու սկզբունքների հիմնական նպատակը երեխային բազմակողմանիորեն կրթելն ու դաստիարակելն է: Ուստի յուրաքանչյուր ուսուցչի սրբազան պարտքն է` լինել չափազանց ուշադիր ու հետևողական, որպեսզի երեխայի զարգացումն ընթանա ճիշտ, համաչափ ու ներդաշնակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ. Աստվածատրյան, Ի. Օհանովա, Ռ. Պետրոսյան, Լ. Երեմյան , <<Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում>>, Երևան , 2001թ.
2. Վ. Սարգսյան Մ.Մանուկյան <<Երկրաչափություն մանուկների համար>>, Երևան 2010թ.
3. Ամիրջանյան Յ. <<Մանկավարժություն>> Երևան, 2005թ.
4. Յու. Բարանսկի <<Մանկավարժություն>>, հ.1, Երևան 2002թ.
5. Մ. Մկրտչյան <<Ժամանակակից դիդակտիկայի հիմունքները ըստ Վ.Կ. Դյաչենկոյի>> <<Մանկավարժություն>> ամսագիր, Եր., 2008
5. Մ. Աստվածատրյան , Ս. Վարդումյան և ուրիշներ, <<Ուսումնառությունը ու դասավանդումը կրտսեր դպրոցում>>, Ձեռնարկ ուսուցիչների համար, Եր. 2004
6. Կ. Թորոսյան Վ. Սարգսյան , Հ. Խաչատրյան և ուրիշներ, <<Մայրենի պատասառների լրակազմ>> , Եր. 2009
7. Նախաշավիղ << Գիտամեթոդական հանդես>> 2. 2012
8. Նախաշավիղ << Գիտամեթոդական հանդես>> 2. 2016
9. <https://forum.armedu.am/forum/>